



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

Թափուր հաստիք | Մասնագիտական կողմնորոշման մասնագետի օգնական

Տևողություն | Երկարաժամկետ, երեք ամիս փորձաշրջանով

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ օգոստոսի 15-ը ներառյալ

«Այբ» դպրոցը փնտրում է հոգատար, եռանդուն, 16-ից 18 տարեկան աշակերտների հետ աշխատելու ցանկություն ունեցող աշխատակցի, որը պատրաստ է միանալու դպրոցի ակտիվ կյանքին և իր ներդրումն ունենալու ապագա սերունդների կերտման գործում:

Աշխատանքի նկարագրություն

Աշխատանքը լինելու է ավագ դպրոցի՝ 10-ից 12-րդ դասարանների աշակերտների և նրանց ծնողների հետ:

Մասնագիտական կողմնորոշման մասնագետի օգնականի հիմնական պարտականությունները

- Համագործակցել դպրոցի ուսուցչական և աշակերտական համայնքների հետ
- Համագործակցել «Այբ» դպրոցի շահառու կազմակերպությունների հետ
- Իրականացնել հետազոտություններ
- Կազմակերպել միջոցառումներ և այցեր կազմակերպություններ
- Վարել մասնագիտական կողմնորոշման թիմի օրացույցը
- Աջակցել թիմի աշխատանքներին
- Վարել նամակագրություններ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով

Աշխատանքային ժամերն են 08:30-ից 17:00:

Մասնագիտական և անձնային պահանջներ

- Բանավոր և գրավոր հաղորդակցության գերազանց հմտություններ
- Անգլերենի շատ լավ իմացություն
- Համակարգչային հմտություններ
- Կազմակերպչական հմտություններ, ինքնակազմակերպվածություն
- Ադմինիստրատիվ աշխատանքի հմտություններ
- Պատասխանատվություն ստանձնելու ունակություն
- Թիմում աշխատելու և թիմակիցների հետ համագործակցելու ունակություն
- Սեր և խանդավառություն երեխաների և կրթության նկատմամբ

Դիմելու կարգը

Բոլոր համապատասխան թեկնածուներին խնդրում ենք counsellor@aybschool.am էլ. հասցեին ուղարկել՝

1. ինքնակենսագրություն (CV),
2. մոտիվացիոն նամակ:

Հայտերն ընդունվում են մինչև 2019 թ. օգոստոսի 15-ը ներառյալ: Նախնական ընտրություն անցած թեկնածուների հետ ծանոթանալու և մրցույթի հետագա փուլերը կազմակերպելու համար կկապվենք անձամբ՝ փաստաթղթերի ստացմանը զուգընթաց: Խնդրում ենք չզանգահարել:

Կազմակերպության մասին

«Այբ» դպրոցը բյուրեղացումն է հայ դպրության լավագույն ավանդույթների և համաշխարհային կրթության բարձրագույն նվաճումների: «Այբ»-ը սովորելու մշակութաստեղծ Նոր միջավայր է, ուր ազգային հենքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման:

«Այբ» դպրոցը ծնվել է կրթության դարաշրջանում, անընդհատ և արագորեն վերափոխվող աշխարհում՝ ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվություն ստանձնող սերունդ ձևավորելու անհրաժեշտությունից: «Այբ»-ը ծնվել է 21-րդ դարում՝ նպատակ ունենալով դառնալու 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր: